**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՈՒՐԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. շենք 25
Հեռախոս 093644146 , էլ. Փոստ urasar.lori@mta.gov.am

Թիվ 115
23.12.2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Ա.Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից գրությամբ Ձեզ եմ ներկայացնում Ուրասար համայնքի 2017-2019թթ. զարգացման ծրագիրը՝հաստատված ավագանու կողմից:

Առդիր ՝ 26 էջ,
2 excel ֆայլ:

Ուրասար համայնքի ղեկավար Ա.Կիրակոսյան

ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ Հ Հ
064 829

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՈՒՐԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ուրասարի համայնք, հասցե 3-րդ փ. 25 շ,
Հեռախոս 093644146, էլ. փոստ urasar.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 23 » դեկտեմբերի 2016 թվականի N 37

### ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2019ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2)-րդ կետի պահանջներով՝

Ուրասար համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Լոռու մարզի Ուրասար գյուղական համայնքի 2017-2019թթ.սոցիալ տնտեսական զարգացման ծրագիրը

| Անուն ազգանուն | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Արմեն | [signature] | | |
| Նովոխատսկի Ալեքսանդր | [signature] | | |
| Ապիկյան Արման | [signature] | | |
| Ջանոյան Արկադի | [signature] | | |
| Ասլանյան Վրեժ | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Ա.Կիրակոսյան

ՈՒՐԱՍԱՐ ... ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ... ԳՅՈՒՂԱԿԱՆ ... 064 ..829

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ՈՒՐԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
## 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵԼ Է՝

Ուրասար համայնքի ղեկավար Ա.Կիրակոսյանը

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է՝

Ուրասար համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 23 -ի թիվ 37 որոշմամբ:

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
# Լ Ո Ռ Ո Ւ Մ Ա Ր Զ Ի

# Ո Ւ Ր Ա Ս Ա Ր Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի
# **2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

# Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱԶՄԵԼ Է՛

Ուրասար համայնքի ղեկավար Ա.Կիրակոսյանը

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է`

Ուրասար համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 23 -ի թիվ 37 որոշմամբ:

**Բովանդակություն**

1. Ներածություն ____________________________________3

2. ՀԶԾ կառուցվածքը _______________________________ 3

2.1. Համայնքի իրավիճակի նկարագրություն ___________________ 3

2.1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն___________________ 3

2.1.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ _________________ 5

2.1.3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումներ ____________________________________ 7

2.1.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում ____________________________________8

2.1.5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ__ 9

2.1.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն ________________________________ 12

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում_______ 14

3.1. Համայնքի զարգացման տեսլական______________________ 14

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ _____________ 15

4. ՀԶԾ ֆինանսավորում ________ _______________________19

5. ՀԶԾ մոնիթորինգ _________________________________19

## 1. Ներածություն

Համայնքի  զարգացման ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն , որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացում:

ՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է նկարագրված լինեն հստակ,իսկ նախատեսված արդյունքները` չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադարձնելու նպատակով:

ՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի ,որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները,մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլ ընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղել:

ՀԶԾ-ը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից:Համայնքի ղեկավարին կից խորհուրդը կազմակերպում և անց է կացնում հանրայինքննարկումներ և բաց լսումներ:Այնուհետև ՀՀԶԾ-ը քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում  է գործողության մեջ:

## 2. Համայնքի զարգացման ծրագրի կառուցվածքը.

### 2.1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

ՀՀ Լոռու մարզի Ուրասար համայնքը գտնվում է Հայաստանի հանրապետության հյուսիսային մասում, մարզկենտրոնից 26 կմ հեռավորության վրա:Գյուղը հիմնադրվել է 1805-1810թթ-ին,վարչական տարածքը կազմում է 2320 հա:Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից 1525 մ է: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է,ամառը`զով , տեղումների և կարկուտի հաճախականությունը մեծ:Անձրևային տարիներին հաջորդում են նաև երաշտի տարիներ,ինչը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսության զարգացման վրա:

Համայնքի տարածքով անցնում է միջհամայնքային նշանակության ավտոճանապարհի 2 կմ երկարությամբ հատվածը,որը ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում.որի պատճառով դժվարանում է բնակիչների կապը տարածաշրջանային կենտրոններից և մարզկենտրոնից:
Մինչև 1950 թվականը գյուղի ազգաբնակչության 90 %-ը կազմել են ռուս ազգի բնակիչները:1960 –ական թվականներից ,երբ կառավարության որոշմամբ դրվեց գյուղի տեղահանման և գյուղի տարածքում ջրամբարի կառուցման խնդիրը,այդ ժամանակվանից էլ սկսվեց ռուս ազգաբնակչության արտագաղթը:Վաճառելով իրենց բնակարանները տեղափոխվում էին այլ բնակավայրեր,իսկ նրանց փոխարեն գյուղը համալրվում էր ադրբեջանցի և հայ ազգի բնակիչներով:Գյուղի տեղահանման և ջրամբարի կառուցման կառավարության որոշումը կյանքի չկոչվեց և շարունակվեց մինչև երկրաշարժը,իսկ երկրաշարժից հետո մինչ օրս այդ մասին որևիցե տեղեկատվական կամ օրենսդրական այլ որոշումներ չեն եղել:Մինչ երկրաշարժը համայնքի բնակչության թիվը եղել է շուրջ 750 մարդ,այդ թվում 350 մարդ եղել են ադրբեջանցիներ,որոնք ղարաբաղյան շարժման տարիների գաղթել են Ադրբեջան,որի արդյունքում համայնքի բնակչության թիվը կեսով չափ պակասել է:

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Համայնքի բնակչության թիվը կազմում է 416 մարդ,որից կանայք՝ 222 ,տղամարդիկ՝ 194:Տղամարդիկ կազմում են բնակչության 47 %-ը:
Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Երեխաներ 0-6 տ. - 36
2. Դպրոցականներ7-17 տ. - 43
3. 18-62 տարեկան - 298
4. Թոշակառուներ - 39
5. Հաշմանդամներ - 6
6. Աշխատունակներ - 304
7. Միակողմանի ծնողազուրկ երեխաներ - ---
8. Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներ - ---
9. Արցախյան պատերազմի մասնակիցներ - 1

Համայնքում փախստականներ չեն բնակվում

**2.1.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ**

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 10321.4 հազար դրամ:
- Սեփական եկամուտները /4353.8 հազար դրամ/ կազմում են բյուջեի 42.2 %-ը,մնացած մասը /5967.6 հազար դրամ/ 57.8% -ը պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող պաշտոնական դրամաշնորհն է:

- Համայնքում արդյունաբերական ձեռնարկություն չկա:

- Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները,հիմնական սպառման շուկաները

Համայնքի բնակչության 50%-ը զբաղված է գյուղատնտեսությամբ,հիմնականում անասնապահությամբ,որը համեմատաբար ավելի եկամտաբեր է և քիչ ծախսեր է պահանջում,քան հողագործությունը: Սպառման շուկային հետ կապված խնդիրները միշտ առկա են,ինչպես նաև կաթնամթերքի և մսամթերքի իրացման ցածր գները:Գյուղատնտեսական մշակաբույսերից հիմնականում ցանվում է կարտոֆիլ և աշնանացան ցորեն,կարտոֆիլի միջին բերքատվությունը չի գերազանցում 50 ցենտներից,իսկ ցորենը 25 ցենտներ,որը համեմատաբար շատ ցածր ցուցանիշ է և համայնքի բնակիչները գերադասում են սեփական հողատարածքները օգտագործել որպես խոտհարկ անասնագլխաքանակը ավելացնելու և անասնակերով ապահովելու համար:Բերքատվության ցածր ցուցանիշները պայմանավորված են ոչ միայն բնակլիմայական վատ պայմաններով,այլև բնակչության աղքատության,ֆինանսական միջոցների բացակայության պատճառով,երբ գյուղացին հնարավորություն չունի անհրաժեշտ քանակի և որակի սերմացուներ,վառելիք,պարարտանյութ,թունաքիմիկատներ ձեռք բերելու և վարձու աշխատանք կատարողներին վճարելու համար:Այս պարագայում գյուղացին կարիք ունի պետության կողմից աջակցության,որպեսզի կարողանա ոտքի կանգնել և հետագայում ինքնուրույն հոգալ իր հոգսերը:

Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը՝ 117 տ/տ

Գյուղ.արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը

| | |
|---|---|
| ա. Ցորեն | - 25ց /հա |
| բ. կարտոֆիլ | - 50ց /հա |
| գ. բանջարանոցային մշակաբույսեր | - 80ց /հա |
| դ. Բնական խոտհարքներ | - 20ց /հա |

ե. Կաթ - 13g/գլուխ

զ. միս - 1g

է. բուրդ -0.02g/գլուխ

ը. մեղր 0,035g/փեթակ

ցանքատարածությունները - 369.2 հա

ա. հացահատիկ -10 հա

բ. կարտոֆիլ - 20 հա

գ. բանջարանոցային մշակաբույսեր -10 հա

դ. բնական խոտհարքներ -910 հա

անասնագլխաքանակ,գլուխ

ա.խոշոր եղջերավոր անասուններ` - 721

բ.մանր եղջերավոր անասուններ - 163

գ. խոզեր - 84

դ. թռչուններ - 879

ե.մեղվաընտանիքներ - 59

Գյուղատնտեսական արտադրանքի սպառման հիմնական շուկան մասնավոր առևտուրն է:

- Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական,պատմական և մշակույթային հուշարձաններ

Համայնքում չկան զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակույթային հուշարձաններ:Կա միայն մեկ հուշարձան`նվիրված երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին:

- Համայնքն ունի մեկ հիմնական դպրոց / նախատեսված է 100  հոգու համար /

Դպրոցականների թիվը `43 ,ուսուցիչներ` 13  :

- Առողջապահական հաստատություններ

Համայնքում գործում է մեկ բուժ կետ: Բուժ կետը ունի մեկ աշխատող:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված է 33  ընտանիք:

### 2.1.3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ:

Համայնքում հիմնախնդիրները շատ են, գրեթե բոլոր ոլորտներում անհրաժեշտություն կա վերակառուցելու,արդիականացնելու,բարեկարգելու և այլն,սակայն կան նաև այնպիսի չլուծված խնդիրներ,որոնք հրատապ լուծում են պահանջում:Դրանց լուծման համար անհրաժեշտ է պետական աջակցություն,որը հնարավորություն կտա իրականացնելու մեծ ծախսեր պահանջող առաջնային անհրաժեշտության հիմնախնդիրները`

- Համայնքի վարչական տարածքում պետության կողմից նախատեսվող ծրագրերն են`

համայնքի 1936թ.-ին կառուցված խմելու ջրատարի 6 կմ ներքին և արտաքին ցանցի վերակառուցումը:
Համայնքի մշակույթի տան հիմնանորոգումը:
Միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

- Համայնքի վարչական տարածքում  մասնավոր ընկերության կողմից նախատեսվող ծրագրերն են`

Համայնքի գերեզմանատան ցանկապատումը:
Համայնքի փողոցային լուսավորության ցանցի կառուցումը:

**2.1.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն,գնահատական և կանխատեսում**

| Հ/Հ | Մուտքերի անվանումները /եկամտատեսակներ/ | 2016 թ.բյուջեով Նախատեսված /հազ.դ/ | 2016 թ. Փաստացի/հազ.դ/ | 2017 թ. Կանխատեսվող | 2018 թ. Կանխատեսվող | 2019 թ. Կանխատեսվող |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 2348.2 | 1890.0 | 2348.2 | 2370.0 | 2375.0 |
| 2 | Գույքահարկ | 372.6 | 240.0 | 419.7 | 430.0 | 440.0 |
| 3 | Տեղական տուրք և վճար | 49.0 | 12.0 | 69.0 | 80.0. | 85.0 |
| 4 | Հողի վարձավճար | 1474.0 | 1624.7 | 1474.0 | 1680.0 | 1700.0 |
| 5 | Այլ գույքի վարձակալութ. | 100.0 | 50.0 | 100.0 | 130.0 | 150.0 |
| 6 | Այլ ոչ հարկ. եկամուտ | 10.0 | - | - | 10.0 | 15.0 |
| 7 | Պաշտ.դրամ./ դոտացիա / | 5967.6 | 5967.6 | 5967.6 | 5967.6 | 5967.6 |
| | Ընդամենը | 10321.4 | 9784.3 | 10378.5 | 10667.6 | 10732.6 |

| Հ/Հ | Ծախսատեսակները | 2016 թ.բյուջեով Նախատեսված /հազ.դ/ | 2016 թ. Փաստացի/հազ.դ/ | 2017 թ. Կանխատեսվող | 2018 թ. Կանխատեսվող | 2019 թ. Կանխատեսվող |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կառավարման ապարատ | 8530.0 | 8348.63 | 8389.5 | 8500.0 | 8500.0 |
| 2 | Ընդh.բնույթի ծառ. | 527.8 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 |
| 3 | Գյուղատնտեսություն | 150.0 | 50.0 | 100.0 | 130.0 | 150.0 |
| 4 | Քաղաքական կուսակց. | 30.0 | - | 30.0 | 30.0 | 30.0 |
| 5 | Մշակութային միջոցառ. | 135.0 | 135.0 | 135.0 | 135.0 | 135.0 |
| 6 | Սոցիալական աջակց. | 1550.0 | 1550.0 | 1200.0 | 1550.0 | 1600.0 |
| 7 | Պահուստ. միջոցներ | 72.2 | - | 520.0 | 530.0 | 540.0 |
| 8 | Ջրամատակարարում | - | - | 923.528 | 980.528 | 1050.0 |
| 9 | Տնտեսական հարաբերութ. | | | -300.0 | -60.0 | -70.0 |
| | Ընդամենը | 10995.0 | 10087.6 | 11596.0 | 11769.5 | 11939.0 |

**2.1.5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ**

1) Գյուղմթերքի իրացումը,ցածր գինը

2) Նախադպրոցական կրթության հաստատություն չկա

3) Մշակույթի տուն չկա

4) Սպորտ դահլիճ չկա

5) Միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը

6) Համայնքը գազաֆիկացված չէ

7) Գերեզմանատունը ցանկապատված չէ

1) Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման հիմնական խոչնդոտող գործոններն են ֆինանսի բացակայությունը, իրացման շուկայում արտադրանքի անմրցունակ լինելը, իրացման դժվարությունները, գիտելիքների պակասը:

2) Համայնքի գույքի կառավարումը իրականացնելու խնդրի խոչնդոտը գործարար միջավայրի և ձեռնարկատիրության ցածր մակարդակը , ֆինանսի պակասը , բնակչության մոտ գիտելիքների պակասը:

3) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման խոչնդոտներից են՝ շենքի ձեռք բերման խնդիրը՝ համապատասխան ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով, ինչպես նաև համապատասխան գույքի ձեռք բերման ֆինանսական խնդիրները:

4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչնդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի բացակայությունը և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

5) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը բարելավելու համար խոչնդոտ է աշխատատեղերի պակասը, սոցիալական օգնության ֆինանսի սակավությունը , լրացուցիչ եկամուտների ստացման բացակայությունը. համայնքում գազաֆիկացման բացակայությունը, անբավարար ջրամատակարարման խնդիրը:

6) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչնդոտներից են համապատասխան

մարզական կառույցների և գույքի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները: `

7) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են` համայնքաբնակների աղքատությունը, ֆինանսական միջոցների բացակայությունը:

8) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալտնտեսությանաշխատանքներիապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են`

.խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը, աղբամանների ,աղբահարթակների,աղբավայրի և աղբատար մեքենայի բացակայությունը, ֆինանսական միջոցների բացակայությունը:

.փողոցային լուսավորության բացակայությունը:

9) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են`

.միջհամայնքային, ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը,

.հանրային տրանսպորտի անբավարար վիճակը,

.կանգառների բացակայությունը,

10) Պետության պաշտպանության իրականացման աջակցումը,այս խնդրի լուծման համար կարևոր խոչնդոտ է հայրենասիրական,պետական մտածողության պակասը, գյուղաբնակների ամենօրյա զբաղվածությունը անասնապահության մեջ, տրանսպորտային միջոցների ոչ սարքին վիճակը:

11) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են`

.քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

.սեյսմիկ գոտում գտնվելը,

.աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,

12) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են`

. ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայությունը, արոտներներում ջրի բացակայությունը:

.սպառման շուկայի դժվար հասանելիությունը,

12) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

- հեղեղատարների բացակայությունը,
- բնակչության գիտակցական մակարդակի ոչ բարվոք վիճակը:

14) Զբոսաշրջության զարգացման խթանման խոչնդոտ է հեռավորությունը շրջկենտրոնից,ճանապարհների քայքայված վիճակը:

15) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

16) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

աշխատատեղերի բացակայությունը

17) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ իստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

. բուժկետի շենքի բացակայությունը, մասնագետների և սարքավորումների պակասը, սոցիալական խավերի ֆինանսական ցածր հնարավորությունները, առողջության պահպանման համալիր ծրագրի բացակայությունը:

18) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ դժվարությունները կապված են սոցիալական վիճակի և գիտակցական մակարդակի հետ:

19) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը, կապված է սոցիալական վատ վիճակի և գիտելիքների անհրաժեշտ պաշարի բացակայության հետ :

20) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են`

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

21) բարեգործության խթանումը` համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով- այս խնդրի լուծման դժվարությունները կապված են իրազեկման, հայրենասիրական ոգու պրոպագանդման,արտերկրներում բնակվող մեր հայրենակիցների հետ մշտական կապի բացակայության, նրանց համայնքային կյանքին ծանոթացնելու և մասնակից դարձնեու խնդրի հետ , ինչպես նաև բարեգործությունների լայն լուսաբանման բացակայության հետ:

**2.1.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն**

- *Համայնքի ուժեղ կողմերը`*

1. Մեծ աշխատուժ
2. Ղեկավարության հետևողականությունը
3. ՀէԿ-ի առկայություն

- *Համայնքի թույլ կողմերը`*

1. Ֆինանսական ռեսուրսների սակավությունը
2. Խմելու ջրի ներքին և արտաքին ցանցերի անմխիթար վիճակը
3. Համայնքը գազաֆիկացված չէ

4. Տրանսպորտային հաղորդակցություն
5. Երիտասարդների ժամանցի խնդիրը
6. Առևտրի շուկայի բացակայությունը:
7. Աղքատության մակարդակը
8. Գործազրկության մակարդակը
9. Աղբահանության բացակայություն
10. Ճանապարհների անմխիթար վիճակը

- Համայնքի հնարավորությունները

1. Համայնքի տնտեսական կյանքի աշխուժացում
2. Գյուղատնտեսության զարգացման միտումներ
3. Համագործակցություն այլ համայնքների հետ:
4. Տեղեկատվական համակարգերի և ցանցերի զարգացում

- Համայնքի սպառնալիքները

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումներից ետ մնալը
2. Բնակչության աճի ցածր տեմպ

5 Ֆինանսական ռեսուրսների պակաս

6. Բնակչության արտագաղթ
7. Բնակչության անտարբերությունը տեղական ինքնակառավարման հանդեպ:

## 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է `

• Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով ` ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:

• Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:

• Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

• Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,

• Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը

• Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,

• Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը

• Բարեկարգել ճանապարհները,ապահովել նորմալ և անվտանգ տրանսպորտային երթևեկությունը:

• Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,

• Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 10%-ով աճի,

• Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 3%-ով աճի:

• Երիտասաւդության ներգրավմամբ նախատեսվում է մշակույթային կյանքի բարելավում, մշակույթային խմբակների ստեղծում, միջոցառումների կազմակերպում:

• Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային գույքը վարձակալությամբ տրամադրելու աշխատանքներ, մասնավորապես համայնքային հողերի վարձակալությամբ տրամադրելը: Նախատեսվում է նաև համայնքային սեփականության հողամասերի օտարում ` արտադրական կառույցների համար:

14. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության

բնագավառում նախատեսում է `դասընթացների կազմակերպում, բնակչությանն իրազեկման ազդանշանային սարքավորումների տեղադրում:

15. Պետական պաշտպանության աջակցման բնագավառում նախատեսվում է ռազմահայրենասիրական միջոցառումների իրականացում, բանակային կյանքին վերաբերվող հարցերի լուսաբանում,զինապարտների պարբերական հաշվառում և զինկոմիսարիատների հետ փոխհամագործակցություն:

16. Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում նախատեսվում է սոցիալական նպաստների տրամադրում, ֆինանսական օգնության տրամադրում փարոս համակարգում չընդգրկված ,սական սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքներին:

**3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ**

ԾՐԱԳԻՐ 1

Ուրասար համայնքում կոմունալ տնտեսության աշխատանքները կազմակերպելու նպատակով կիրականացվի «Խմելու ջրագծի ներքին և արտաքին ցանցի վերակառուցում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է` համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են`

1.Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ, կանոնակարգված ջրի բաշխում

Ծրագրի հիմնական գործողություններն են`

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ

1.1. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:

1.2.Տեղադրել փականով բաժանարարները` բաշխումը կատարելով հավասարաչափ:

1.3. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ

2.1.Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:

Ծրագրի հիմնական ռիսկերն են` դրամական միջոցների ձեռք բերումը: Ակնկալում ենք պետական աջակցություն:Համայնքի սեփական եկամուտներով հնարավոր չէ նման ծրագրի իրականացումը:Ծրագրի հիմնական շահառուներն են Ուրասար

համայնքի բոլոր 416 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում` 2018թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն: Խմելու ջրագիծը գտնվում է անմխիթար վիճակում:Ներքին և արտաքին ցանցը ենթակա է վերակառուցման:Ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում:Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով:
Ծրագրի բյուջեն կազմում է
Ընթացիկ ծախսեր` 10 մլն դրամ

Կապիտալծախսեր` 70մլն դրամ

Ընդհանուր բյուջեն` 80 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 2

Ուրասար համայնքում ակտիվ մշակույթային կյանքի կազմակերպման նպատակով նախատեսվում է համայնքի << Մշակույթի տան կապիտալ նորոգում >> ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է` զարգացնել համայնքի բնակիչների մշակույթային կյանքը: : Ծրագրի միջանկյալ արդյունքներն են`

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1 Վերանորոգել տանիքի փայտե կառուցվածքը
1.2 Ձեռք բերել ցինկապատ թիթեղ 350 քառ.մ համար

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ

2.1. Հատակի բետոնալցում,նորոգում

2.2. Եվրոլուսամուտների տեղադրում

2.3. Արտաքին ցանցի նորոգում

Ծրագրի հիմնական ռիսկերն են` դրամական միջոցների ձեռք բերումը: Ակնկալում ենք պետական աջակցություն:Համայնքի սեփական եկամուտներով հնարավոր չէ նման ծրագրի իրականացումը:Ծրագրի հիմնական շահառուներն են Ուրասար համայնքի բոլոր 416 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում` 2018թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն ` Նախատեսվում է համայնքային սեփականության մշակույթի տան կապիտալ նորոգում:

Ծրագրի բյուջեն կազմում է`

Ընթացիկ ծախսեր`   5 մլն. դրամ

Կապիտալ ծախսեր`   25 մլն. դրամ

Ընդհանուր բյուջեն`   30 մլն. դրամ:

## ԾՐԱԳԻՐ 3

Ուրասար համայնքում միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների պահպանման և շահագործման նպատակով կիրականացվի «Ճանապարհների բարեկարգում» ծրագիրը:Ծրագրի անմիջական նպատակն է` համայնքի բնակիչներին բարեկարգ և անվտանգ ճանապարհով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են`

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.4. Հեղեղատարներ կառուցել:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1.Մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի գործի հասարակական տրանսպորտի երթուղային տաքսի:

Ծրագրի իրականացման համար ակնկալում ենք պետական աջակցություն: Համայնքի սեփական եկամուտներով հնարավոր չէ նման ծրագրի իրականացումը:Ծրագրի հիմնական շահառուներն են Ուրասար համայնքի բոլոր 416 բնակիչները և հարևան  համայնքի  970  բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում` 2018 թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն: Այժմ Արմանիս-Ուրասար միջհամայնքային 2 կմ ճանապարհը և  2 կմ ներհամայնքային ճանապարհը`որը հանդիսանում է Ուրասար –Կաթնաղբյուր միջհամայնքային  ճանապարհ, գտնվում են քայքայված վիճակում: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ  և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի: Ծրագրի բյուջեն կազմում է`

Ընթացիկ ծախսեր`   20 մլն. դրամ

Կապիտալ ծախսեր`   300 մլն. դրամ

Ընդհանուր բյուջեն`   320 մլն. դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

Ուրասար համայնքի բնակավայրի բարեկարգման  նպատակով կիրականացվի «Փողոցային լուսավորություն» ծրագիրը:Ծրագրի անմիջական նպատակն է` ունենալ լուսավոր և գեղեցիկ համայնք: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են`

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Լուսամփոփների ձեռք բերում:

1.2. Հաղորդալարերի ձեռք բերում

1.4. Փողոցային լուսամփոփների տեղադրում:

Ծրագիրն իրականացվելու է բարեգործության միջոցով: Ծրագրի հիմնական շահառուն համայնքի բնակչությունն է : Ծրագրի հիմնական շահառուներն են Ուրասար համայնքի  բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում` 2017թ Ծրագրի իրականացման արդյունքում համանքում նախատեսվում է բոլոր փողոցների լուսավորության ապահովում և ունենալ լուսավորված ու գեղեցիկ համայնք: Ծրագրի բյուջեն կազմում է`

Ընթացիկ ծախսեր`   0.3 մլն. դրամ

Կապիտալ ծախսեր`   1.2 մլն. դրամ

Ընդհանուր բյուջեն`    1.5 մլն. դրամ

ԾՐԱԳԻՐ 5

Ուրասար համայնքի գերեզմանատան հուշաքարերի պահպանման  նպատակով կիրականացվի «Գերեզմանատան ցանկապատում» ծրագիրը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են

`1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել 50 հատ երկաթյա սյուներ և 1.5 տ ցեմենտ:

1.2. Տեղադրել սյուները:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Ջեռք բերել ցանց 170 մետր:

2.2. Ցանկապատել գերեզմանատունը:

Ծրագիրն իրականացվելու է բարեգործության միջոցով: Ծրագրի հիմնական շահառուն համայնքի բնակչությունն է : Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում` 2017թ: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ապահովել համայնքի գերեզմանատան պահպանությունը:

Ծրագրի բյուջեն կազմում է`

Ընթացիկ ծախսեր` 0.25 մլն. դրամ

Կապիտալ ծախսեր` 0.75 մլն. դրամ

Ընդհանուր բյուջեն` 1 մլն. դրամ

**4.Համայնքի զարգածման ծրագրի ֆինանսավորումը**

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

1. ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ- իրականացվում է պետական աջակցությամբ:
2. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ- իրականացվում է պետական աջակցությամբ:
3. ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ և ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ- իրականացվում է պետական աջակցությամբ:
4. ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ –իրականացվում է բարեգործական միջոցներով:
5. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ - իրականացվում է բարեգործական միջոցներով:

**5. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը** - իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը,բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը : Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագիրի նակատմամբ իրականացված մոնիտորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում` ըստ տարիների և թիրախային արժեքների:

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

## << Խմելու ջրագծի ներքին և արտաքին ցանցի վերակառուցում>>

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ուրասար համայնքում կազմակերպել կոմունալ տնտեսության աշխատանքները:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով ապահովում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ աճ (%)</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td></td><td></td></tr>
<tr><td>20</td><td>40</td><td>100</td><td>100</td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Վերանորոգված արտաքին ցանցի խմելու ջրի գործող ջրագիծ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ կմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td></td><td></td></tr>
<tr><td>0</td><td>1</td><td>2</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2. Վերակառուցված ներքին ցանցի խմելու ջրի գործող ջրագիծ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ կմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td></td><td></td></tr>
<tr><td>0</td><td>1</td><td>2</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:<br>1.2.Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:<br>1.3. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 10 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 70 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 80 մլն դրամ:</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">դրամական միջոցների ձեռք բերումը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Ուրասար համայնքի բոլոր բնակիչները:</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2018թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Խմելու ջրագիծը գտնվում է անմխիթար վիճակում:Ներքին և արտաքին ցանցը ենթակա է վերակառուցման:Ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով:</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

<<ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ>>

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ակտիվ մշակութային կյանքի կազմակերպում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ունենալ բարեկարգ մշակույթի տուն</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ աճ (%)</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td>23</td><td>70</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Տանիքի կապիտալ վերանորոգում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ Տանիքի մակերես քառ.մ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td></td><td></td></tr>
<tr><td>0</td><td>350</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2. Մշակույթի տան ներքին և արտաքին կապ.վերանորոգում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ Մլն.դրամ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td></td><td></td></tr>
<tr><td>0</td><td></td><td>23</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Վերանորոգել տանիքի փայտե կառուցվածքը<br>1.2. Ձեռք բերել ցինկապատ թիթեղ 350քառ.մ համար<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Հատակի բետոնալցում, նորոգում<br>2.2 Եվրոլուսամուտներիտեղադրում<br>2.3 Արտաքին տեսքի նորոգում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր` 5 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր` 25 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն` 30 մլն դրամ:</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">դրամական միջոցների ձեռք բերումը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Ուրասար համայնքի բոլոր բնակիչները:</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">Սկիզբ` 2017թ.- Ավարտ` 2018թ.</td></tr>
